Երկրի ցնցումներից քանդվեցին և՛ կամուրջը, և՛ ամրոցի պատերը, մզկիթներն ու եկեղեցիները, բազմաթիվ տներ, տալիս է մանրամասնություններ և իր հայրենի Քանաքեռ գյուղին պատճառած կործանումների մասին։ Քանաքեռի գյուղացիական տունն իր կառուցման տիպով շատ է նման Զանգեզուրի մէջ տան՝ հացատոնի տիպին։ Նա գրում է՝

«Եւ 'ի Քանաքեռ գիւղ ոչ մնաց բուն մի հավու, և էր զարմանք, զի 'ի նոյն Քանաքեռ 'ի տան մի անկան չորեքին որմունք, և տանիքն 'ի վերա չորս սեանցն եկած անշարժ որպէս թէ կախեալ զօդոյն»[15]։

Սա մի ճարտարախոս վկայություն է, թե որչափ հայկական ժողովրդական տունն իր ճարտարապետական խնդիրների լուծման մանրամասնություններով հարմարվել է երկրի հրաբխային պայմաններին՝ մշակելով երկրաշարժադիմացիկ (անտիսեյսմիկ) ձևեր։

Հացատոնի՝ դարադամի գործադրած շինարարական եղանակները ցույց են տալիս, որ նրա սկզբնավորությունը գենետիկորեն կապ ունի գետնափոր կառուցվածքների հետ և պահպանել է իրենից առաջ ձևավորված վերգետնային փայտաշեն կառուցվածքի բնորոշ առանձնահատկությունները, հարմարվելով գետնի մեջ խորանալուց առաջացած նոր պահանջներին։ Առորմին՝ դա նախկին փայտաշեն տան կմախքն է, որն իր սյուների մեջ եղած արանքները լցրել է ոչ թե ուղղաձիգ տնկված գերաններով կամ հաստ տախտակներով, այլ քարե շարվածքով, երբ շենքը ստիպված է եղել գետնի մեջ խորանալու և դադարելով արդեն վերերկրյա կառուցվածք լինելուց՝ օգտվել է գետնի մեջ կտրված բնական ժայռի կամ հողի կողերից կամ բավականացել է անփույթ շարված պատերով և այսպիսով խույս է տվել ավելորդ փայտեղեն շինանյութին դիմելու անհրաժեշտությունից։ Առհասարակ հացատոնի ամբողջ ձևը ապացուցում է, որ կառուցողն ամեն կերպ խնայողությամբ է վերաբերվել փայտեղենի գործադրությանը, մանավանդ առաստաղի ձևավորման մեջ։ Քանի որ գետնափոր շենքը հնարավորություն չունի լույսը ստանալ կողքերից և ստիպված է եղել լուսամուտը տեղափոխել առաստաղին, նա փայտե կառուցվածքի երկթեք տանիքը փոխել է քառաթեքի, որն ավելի քիչ փայտ է պահանջում, և ծղոտե, խոտե կամ տախտակե ծածկից անցել է հողածածկին։ Հողածածկի ծանրությունն առաջ է բերել տակից նեցուկ տալու անհրաժեշտությունն, այդ սյուներն արդեն իրենց վրա են վերցրել տանիքը պահելու գլխավոր կոչումը՝ փայտե վանդակը շատ նշանավոր չափով բեռնաթափվել է այդ պարտականությունից և հաճախակի կրկնվող երկրաշարժների երկրում ստանձնել է մի այլ դեր։

Թվում է, թե դեպի այդ գետնափոր տուն մտնելը դյուրացնելու համար հարկ է եղել տան առջևի տարածությունը հողից ազատել և հարթել, տան աջ և ձախ կողմերի պատերը դեպի առաջ շարունակել՝ կողքերը հողի-քարի փուլ գալուց ապահովելու համար. այսպիսով պիտի առաջ գար երկու կողմնակի պատերի մեջ պարփակված սահարը, սրհարը[16]։

---

[15] Զաքարիայ Սարկաւագ, Պատմագրութիւն, հ. բ, գլ. ԾԱ, 1870, Վաղարշապատ, էջ 104։

[16] Vorhalle, πρόδρομος. Զանազան գավառներում տարածված հայկական ժողովրդական տան ձևերի հետազոտությունը բերել է ինձ այն եզրակացության, որ հացատոնի և տան հարակից տիպի երդիկավոր տունը հատկանշական է Հայկական լեռնաշխարհում VII և VI դարերում մ. թ. ա. վերաբնակված էթնիկ տարրի համար և իր ծագումով ոչ մի կապ չունի երկրում մինչ այդ մշակված ուրարտա-խալդական տան հետ։